

ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎՈՒՄԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ  
ՌԻՎԸՐՍԱՅՏԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կիրակի, Փետրուար 28ին Առաջնորդ Սրբազան Հայրը հովուական այցելութիւն տուաւ Ռիվրոսայտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, մատոյց օրուան Սուրբ Պատարագը եւ Ծուխի այցելու Հոգեւոր Հովիւ՝ Դոկտ. Արժ. Տ. Ստեփանոս Քինյ. Տինկիլեանի մասնակցութեամբ, Կիսասարկաւագութեան աստիճան շնորհեց Սարգիս Պոյնիքերեանի: Սրբազան Հայրը քարոզեց Անառակ Որդիի առակի մասին եւ իր խօսքին մէջ գնահատեց Տէր Հօր նուիրեալ ծառայութիւնը, որ առաջին իսկ օրէն լծուած էր Ծուխի կազմաւորման եւ զօրացման աշխատանքներուն: Շնորհաւորեց նաեւ նոր ձեռնադրեալ կիսասարկաւագը եւ յորդորեց, որ նոր նուիրումով շարունակէ իր ծառայութիւնը եւ Աստուծոյ կամքով յառաջիկայ տարի արժանանայ Սարկաւագական ձեռնադրութեան: Սրբազան Հայրը յատուկ գնահատութեամբ արտայայտուեցաւ Երեցկին Սարիամ Տինկիլեանին, որ պատրաստած էր Փոքրիկներու Երգչախումբը, որոնք Սուրբ Պատարագին երգեցողութիւնը կատարեցին մինչեւ կէտը՝ արտասանելով նաեւ «*Հաւատամք*»ը:

Սուրբ Պատարագի աւարտին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որու ընթացքին Տէր Հայրը Ծուխին կողմէ Առաջնորդ Սրբազան Հօր յանձնեց իրենց նուէրը ի նպաստ Առաջնորդարանի Խնամակալութեան Ծրագրին, Մայր Տաճարի Հիմնադրամին, ինչպէս նաեւ «Քոյր Եկեղեցւոյ» Ծրագրին: Սրբազան Հայրը վկայագիրներ եւ Հայաստանի մէջ պատրաստուած փայտեայ խաչեր նուիրեց եկեղեցւոյ երիտասարդութեան, ինչպէս նաեւ անոնց, որոնք իրենց ծառայութեան բաժինը ունեցած էին եկեղեցւոյ բարգաւաճման ներառեալ «*Տարուան Ընտանիքը*», «*Տարուան Երեց Ձոյգը*», «*Ընտանիքի Ծրագիր Համակարգողները*» եւ անոնք, որոնք զօրավիզ կանգնեցան եւ ուղղութիւն տուին երիտասարդութեան:

Սրբազան Հայրը յատուկ վկայագրով եւ Առաջնորդարանի «*Հայ Ոգի*» շքանշանով պարգեւատրեց Տիար Յակոբ Փալանճեանը, որ Ծուխին կողմէ ընտրուած էր որպէս տարուան օրինակելի հաւատացեալը: Ան իր քաջալերական աջակցութիւնը ցուցաբերած էր եկեղեցւոյ ծրագիրներուն եւ բոլոր ձեռնարկներուն յաջողութեան համար: Սրբազան Հայրը դարձեալ իր գնահատութիւնը յայտնեց Տէր Հօր եւ Երեցկինին, որոնք համայնքին կեանքը կը բարելաւեն եւ կը քաջալերեն երիտասարդ ընտանիքները, որպէսզի մաս կազմեն Ծխական Խորհուրդին եւ Տիկնանց Միութեան:

Փակման խօսքին մէջ Սրբազան Հայրը կոչ ուղղեց համայնքին՝ շարունակելու իրենց հոգեւոր բարգաւաճումը Հայկական Ոգիով որ կը ճառագայթէ Սուրբ Էջմիածնէն:

Սրբազան Հօր օրհնութեան աղօթքով փակուեցաւ հոգեկան մխիթարութիւն պատճառող օրուան արարողութիւնը եւ ընկերային հաւաքը: